ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

13 հունվարի 2011 թվականի թիվ 3-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ 2011 ԹՎԱԿԱՆԻՆ ԱՆՑԿԱՑՎԵԼԻՔ ՄԱՐԴԱՀԱՄԱՐԻ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ՀԱՄԱԿԱՐԳԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԽՈՒՄԲ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության <<Մարդահամարի մասին>> օրենքի 4-րդ և 15-րդ հոդվածներով և հիմք ընդունելով ՀՀ Փոխվարչապետ, տարածքային կառավարման նախարար Ա. Գևորգյանի մոտ 28.12.2010թ.կայացած խորհրդակցության N Մ 28/12 արձանագրության 2-րդ կետի է) ենթակետը՝

ո ր ո շ ու մ ե մ.

1. Հաստատել Տավուշի մարզում 2011 թվականին անցկացվելիք մարդահամարի նախապատրաստման և անցկացման մարզային աշխատանքային խմբի կազմը՝ համաձայն հավելված 1-ի:
2. Առաջարկել աշխատանքային խմբին ուսումնասիրել փորձնական մարդահամարի արդյունքները՝ 2011թ. մարդահամարի նախապատրաստման ու անցկացման աշխատանքների ընթացքում արձանագրված թերությունները բացառելու նպատակով:
3. Առաջարկել ՀՀ Տավուշի մարզի համայնքների ղեկավարներին և հանրապետական գործադիր մարմինների տարածքային ստորաբաժանումների ղեկավարներին ապահովել գործուն օժանդակություն՝ մարդահամարի նախապատրաստման ու անցկացման ամբողջ ժամանակահատվածում:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՄԱՐԶՊԵՏ Ա. ՂՈՒԼԱՐՅԱՆ

2011թ. հունվար
ք. Իջևան

Հավելված 1
ՀՀ Տավուշի մարզպետի
2011թ. հունվարի 13 N 2-Ա որոշման

ԿԱԶՄ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ 2011 ԹՎԱԿԱՆԻՆ ԱՆՑԱԿՑՎԵԼԻՔ ՄԱՐԴԱՀԱՄԱՐԻ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ և ԱՆՑԿԱՑՄԱՆ ՀՀ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԽՄԲԻ

Լ. Սարգսյան	- Մարզպետի տեղակալ, հանձնաժողովի նախագահ
Ա. Աչինյան	- ՀՀ ազգային վիճակագրական ծառայության մարզային գործակալության պետ, հանձնաժողովի նախագահի տեղակալ - ՀՀ կառավարությանն առընթեր ՀՀ ոստիկանության մարզային վարչություն, հանձնաժողովի նախագահի տեղակալ - ՀՀ ԿԱ անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի համապատասխան ստորաբաժանման ղեկավար
Մ. Մխիթարյան	- Մարզպետարանի աշխատակազմի ՏԻ և ՀԳՄ հարցերով վարչության պետ
Հ. Ավալյան	- Մարզպետարանի աշխատակազմի քարտուղարության պետ, հանձնաժողովի քարտուղար
Դ. Մխիթարյան	- Տի և ՀԳՄ հարցերով վարչության ՏԻ և ՀԾ հարցերի բաժնի վարիչ
Վ. Հովհաննիսյան	- Տի և ՀԳՄ հարցերով վարչության ՏԻ և ՀԾ հարցերի բաժնի գլխ. մասնագետ
Գ. Մարալչյան	-Տի և ՀԳՄ հարցերով վարչության ՀԳՄ ՏՍ համակարգման բաժնի վարիչ

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ Ս. ԴԱՎԹՅԱՆ